МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«29» օգոստոսի 2025թ.

«ԴԱՐՈՆՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՍՈՖՅԱ ԲԱԲԿԵՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ
ՀՎՀՀ 01335381
Հասցե՝ ք. Երևան, Լենինգրադյան փ. 31/1, 42 բն.
Հեռ.՝ 077393866

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/02» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԴԱՐՈՆՆ» ՍՊԸ-ն: Մասնակցության հայտի Հավելված 1-ով (ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարություն) «ԴԱՐՈՆՆ» ՍՊԸ-ն հավաստել է, որ իրեն փոխկապակցված անձինք բավարարում են Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում «ԴԱՐՈՆՆ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 3-րդ, 7-րդ, 13-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, որից հետո «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության և «ԴԱՐՈՆՆ» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի հուլիսի 9-ին կնքվել է ապրանքների մատակարարման ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/02-6 (այսուհետ՝ Պայմանագիր) ծածկագրով գնման պայմանագիր:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստացված գրությամբ պարզվել է, որ ՍՈՖՅԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆԻ Ա/Ձ-ն (ՀՎՀՀ 47978845) 2024 թվականի հուլիսի 9-ից մինչև 2026 թվականի հուլիսի 9-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ինչպես նաև ՍՈՖՅԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆԻ Ա/Ձ-ի և «ԴԱՐՈՆՆ» ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն: Սակայն, եթե այդ փոխկապակցվածությունը հայտնի լիներ մինչև պայմանագրի կնքումը, ապա վերջինս չէր կնքվի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության և «ԴԱՐՈՆՆ» ՍՊԸ-ի միջև 09.07.2025թ-ին կնքված ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/02-6 գնման պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2025թ-ի օգոստոսի 29-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման գումարը կազմում է 9850,2 ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը կազմում է 14775,3 ՀՀ դրամ, որոնք անհրաժեշտ է վճարել Ընկերության «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված **1150001172630300** հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը ներառվում է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, որ Ձեր կողմից նշված գումարը մինչև 2025թ-ի սեպտեմբերի 10-ը ներառյալ վճարելու դեպքում «ԴԱՐՈՆՆ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը վճարելուց հետո վճարված կտրոնի բնօրինակը մինչև 2025թ-ի սեպտեմբերի 10-ը ներառյալ Ձեր կողմից պետք է ներկայացվի «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերություն՝ ծրագրերի իրականացման ծառայության գնումների կազմակերպման բաժին:

Միաժամանակ, հիմք ընդունելով Պայմանագրի 8.3 կետը, տեղեկացնում եմ, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը այլ ընկերությունից նշված պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրով և քանակով, ապրանք ձեռք բերելու դեպքում՝ «ԴԱՐՈՆՆ» ՍՊԸ-ն պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը, եթե պայմանագիրը կնքվի ավելի թանկ գնով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

Կատարող՝ ծրագրերի իրականացման ծառայության գնումների կազմակերպման

բաժնի գլխավոր մասնագետ Սրբուհի Ներսիսյան, հեռ. 060380040